ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22**

_____,, ,,_____,, 2019թ N _____ **Ֆաքս (374010) 28 18 32**

<<Իրավունքի զարգացման կենտրոն>> ՀԿ-ի
Նախագահ Վիոլետտա Զոփունյանին

Հարգելի տիկին Զոփունյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 13-ի գրության ներկայացնում ենք տեղեկատվություն մարզի պետական առողջապահական հիմնարկների վերաբերյալ.

Մարզում գործում են 8 պետական առողջապահական կազմակերպություններ, որից 5-ը մատուցում են միայն արտահիվանդանոցային, իսկ 3-ը՝ ինչպես արտահիվանդանոցային, այնպես էլ հիվանդանոցային ծառայություններ:

Միայն արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող կազմակերպություններ.

1. ''Հռիփսիմե ԳԲԱ '' ՊՈԱԿ Եղեգիս համայնք, բնակավայր Շատին, ունի 11 ԲՄԿ, 22 աշխատող, որից 2-ը՝ ընտանեկան բժիշկ: Սպասարկում է մոտ 4250 բնակչի:
2. ''Մալիշկայի ԱԱՊԿ'' ՊՈԱԿ Մալիշկայի համայնք, ունի 13 աշխատող ,որից 3-ը բժիշկներ են՝ 2-ը ընտանեկան և 1 ստոմատոլոգ: Սպասարկում է 4200 բնակչի:
3. ''Արենիի ԱԱՊԿ'' ՊՈԱԿ Արենի համայնք,բնակավայր Արենի, ունի 19 աշխատող ,որից 3-ը բժիշկներ են՝ 2-ը ընտանեկան և 1 ստոմատոլոգ: Սպասարկում է մոտ 4800 բնակչի: Ունի 4 ԲՄԿ –ներ:
4.''Աղավնաձորի ԱԱՊԿ'' ՊՈԱԿ բնակավայր Աղավնաձոր, ունի 9 աշխատող, որից 1-ը ընտանեկան բժիշկ: ՈՒնի 1 ԲՄԿ Արփի բնակավայրում, սպասարկում է 2260 բնակիչ:
5.''Զառիթափի ԱԱՊԿ'' ՊՈԱԿ համայնք Զառիթափ, ունի 9 աշխատող ,որից 2-ը ընտանեկան բժիշկներ են: Ունի 4 ԲՄԿ-ներ և սպասարկում է 2290բնակչի:

''Արենիի ԱԱՊԿ''-ն և ''Մալիշկայի ԱԱՊԿ''-ն ունեն նաև ստոմատոլոգիական ծառայություն:

Հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություն մատուցում են.

''Եղեգնաձորի ԲԿ'' ՓԲԸ-ն՝ ունի 182 աշխատող, որից 49-ը բժիշկ: Արտահիվանդանոցային ձևով սպասարկում է 14500 բնակչի, իսկ հիվանդանոցային ծառայություն մատուցում է մոտ տարածաշրջանի 30.000 բնակչի: Ունի 4 ԲՄԿ:

''Վայքի ԲՄ'' ՓԲԸ –ն՝ ունի 132 աշխատող ,որից 34-ը բժիշկներ են: Արտահիվանդանոցային սպասարկում մատուցում է 9470 բնակչի, իսկ հիվանդանոցային՝ տարածաշրջանի մոտ 12000բնակչի: Ունի 11 ԲՄԿ:

''Ջերմուկի ԱԿ'' ՓԲԸ-ն՝ ունի 37 աշխատող, որից 11-ը բժիշկներ են :Գտնվում է Ջերմուկ քաղաքում և սպասարկում է 6060 բնակչի: Հիվանդանոցային ծառայություններից մատուցում է միայն մանկական և թերապևտիկ ծառայություններ:

Կենտրոններում գործում է նաև շտապ օգնության ծառայությունը:

''Եղեգնաձորի ԲԿ'',''Վայքի ԲՄ'', ''Ջերմուկի ԱԿ'' ՓԲԸ-ներում աշխատում են թերապևտներ, մանկաբույժներ, նյարդաբաններ,գինեկոլոգներ, վիրաբույժներ, մաշկաբաններ, վարակաբաններ, շտապ օգնության բժիշկներ, ստոմատոլոգներ, ռենտգենոլոգ , սոնագրաֆիստ, լաբորատորիայի բժիշկներ և այլ մասնագետներ բնակչությանը մատուցելով համապատասխան պրոֆիլի բժշկական ծառայություններ:

Անվճար և արտոնյալ պայմաններով սպասարկումը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 23-ի թիվ 318-Ն որոշման համաձայն:

Համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ *տեղեկատվության ազատությունը* տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է, իսկ *տեղեկատվություն տնօրինողը* տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք են:

Տվյալ դեպքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հանդիսանում է իր ենթակայությամբ գործող առողջապահական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության տնօրինողը և կարող է տրամադրել տեղեկատվություն միայն նրանց մասին:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ առողջապահության և սոցիալական
ապահովության վարչություն Լ.Կարապետյան
Հեռ. /0281/2 43 03